

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻԶ ԵՒ ՇՈԹՈՒԿԱՆՑ ՏՈՂԱԸ

Ա.

Անիի շրջանից, տարաբաղաբար, շատ քիչ ձեռագիրներ են հասել մեր ձեռքը, և խօսքը չի վերաբերում Բագրատունեաց և աւելի հին շրջանի Անիին միայն, այլ և Զաքարեանց ժամանակին: Վաճառակա- նութեամբ, ճարտարապետական բարձր արուեստով, կեանքի ճոխութեամբ և փար- թամութեամբ ունճացած այդ քաղաքը, ինչպէս նկարագրում է մեզ Լաստիվերտ- ցին, կամ Զաքարեան շրջանի նիւթական մշակոյթի մնացորդներն են ցոյց տալիս, ակադեմիկ Մառի պեղումներով երեւան հանուած, չէր կարող ձեռագրական ար- ուեստի մէջ եւս գլուխգործոցներ չստեղ- ծել: Բայց բուն Անիից, գրեթէ ոչինչ ու- նենք, եթէ չհաշուենք Պետրոս Գետադար- ձի ժամանակի մեզ հասած մի երկու ձե- ոագիրները. Անին շարունակ կողոպուտ- ների ենթարկուելով, սելջուկեան, մոն- ղոլական և յետմոնղոլական շրջաններում, կողոպուտել է կամ ոչնչացման ենթար- կուել, յատկապէս, թանգարժէք և թեթե փոխադրելի մնացորդներով, որոնց թւում և ձեռագիրներն են:

Անիին կից վանքերից Հոռոմոսի վանքն է, որ ամենից աւելի զեր է կատարել ման- րանկարչական և զրջութեան արուեստների կողմից. տաճարների բազմութիւնը և ար- ձանագրութիւնների յաճախութիւնը ԺԱ. դարից սկսած, բայց մանաւանդ ԺԳ. և Նոյն իսկ ԺԴ. դարու առաջին կիսում, մեր ձեռքը հասած մի քանի մնացորդներն ու տեղեկութիւնները հաստատում են այդ իրողութիւնը⁽¹⁾: Մեզ յայտնի հնագոյն ձե-

(1) Բացի այստեղ յիշուելիքներից նաեւ Հաղ- րատի նշանաւոր աւետարանը, Գետաշէնից բերուած մեր ձեռքով, որ կազմուել է «հրամանաւ հաւր Մխի- քարայ» «ի վանքս Հոռոմոսի». կազմողն է Արրա- համ եւ նկարիչը Մարգարէ: Զեռ. էջմ. N 3613, Սամուէլ Անեցու ժամանակագրութիւնը առանց յա-ւելումների, արեւելեան, հին բոլորգրով, որ գրել է

աագիրն այդ վանքում, գրուած է 1181 թուականին, Յովհաննէս գրչի ձեռքով, «հրամանաւ Վարդանայ երէց եղբար իմոյ եւ ուսուցչի, եւ սատարութեամբ կրտսեր եղբար աշխարհաւարի՝ Գրիգորոյ», «ի թուիս Հայոց. ՈՒ. ի տիեզերահոշակ վանս Հոռովմոսի՝ ընդ հովանեաւ սուրբ Յովան- նիար, ի հայրապետութեան տեառն Բար- սղի, եւ յառաջնորդութեան ուխտիս Սա- շատրոյ, եւ ի հոգևոր տեսչութեան Կա- րապետի ծերացելոյ իմաստիւք ի Գրիս- տոս»: Այս յիշատակարանից մի հատուած նմանահանութեամբ տալիս է Ալիշան⁽¹⁾, որից կարելի է տեսնել, թէ ի՛նչպիսի բար- ձրութեան և գեղեցկութեան էր հասել այդ տեղ գրչութեան արուեստը: Զեռագրի մանրամասն նկարագրութիւնը տալիս է Բարսեղ Սարգսեանը⁽²⁾, որից երեւում է, թէ արուեստը զուտ արեւելեան է, և հա-ւանօրէն, աւանդութիւն դարձած վանքի գրիչները և նկարիչները համար, որովհե- տեւ նոյն վանքում յետագայում պատրաս- տուած ձեռագիրներն էլ նման բնոյթ ու- նին, որոնց մասին պիտի խօսենք այստեղ:

Բ.

Հոռոմոսի վանքի համեմատաբար ամենից աւելի մեզ ծանօթ գրիչն ու նկա- րիչը Իգնատիոսն է, որ և ներկայ ուսու- մնասիրութեան աւտրկան է: Հնագոյն ձե-

Մխիթար գրիչ Անեցի, 26թ. «Ձյուսնեալս յարդիւնա- կան գործոց, զչուառ գրիչս, զՄխիթարիչ Անեցի, սուտանուն արեղայ եւ աշակերտ բանի ի վանացն Հոռոմոսի, սնեալ առ ոսն սուրբ Յովանիսի, յիշու- ցիք ի Գրիստոս աղաչեմ»: Երեւանի թանգ. N 99 | 94 աւետարանի ոսկեբրչական կազմը, տե՛ս մեր «Մի էջ հայ արուեստի և մշակոյթի պատմութիւ- նից». Տաթև վեցերորդ գիրք, նաեւ առանձին զըր- րոյկով, Հայէպ, 1930. պրակ Ը:

(1) Շիրակ. 27:
(2) Ցուցակ վեներակ. Մխիթ. եր. 381:

աագիրը, որ նա գրել է և նկարագրողել Հաւոյց Թաւրի Ամենափրկիչ վանքի Թա. գէոս և Հայրագետ կրօնաւորներին համար 1214 թ. ին գրած, մեծագիր աւետարանն է, որ այժմ գտնուում է Վենետիկի Միքի-թարեանց մատենադարանում և որի Յովհաննու սկզբնադարձը դունուար նմանահանութեամբ ապրիս է Ալիշանը⁽¹⁾, իսկ ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը Բարսեղ Սարգսեանը⁽²⁾, Կլիսաւոր յիշատակարանը գտնուում է վերջում և գրուած է ստացողների բերանից, որից և քոչում ենք հեռեկալ տեղեկութիւնները. գառաք գրել և նկարել՝ Բզնաախոս գրչի ստիւով և երանգ երանգ խառնուածով զարդարեալ, ի վանքս որ կոչի Հաւոյց Թաւ, ընդ հովանեաւ սուրբ կաթողիկոսիս և մեծահոգի սուրբ նշանին՝ Ամենափրկիչի և ամենաբարոյ Պաւղոս վարդապետի: և այլ սուրբ և ճգնագրեաց և համակամ եղբարց, որոց ողորմեացի Քրիստոս Աստուածամէն»: Ձեռագիրը գրուած է «Թաւրիս Հայոց ՈՒԿԻ. ձեռամբ Բզնաախոս մեղատորին»: Հ. Սարգսեանը յայտնում է, որ 92 անկարեւած խաչի պատուանդանի վերոյ գեղանադոյն և մանր երկաթագրով գրուած է. «Բարեխաւս Բզնաախոսին», որից իրաւամբ եզրակացնում է, որ գրիչն ու նկարիչը նոյն Բզնաախոսն է: Մեծ յիշատակարանի վերջում մի օտար ձեռք աւելացրել է. «Հաւոյցի վանացն սուկեառութ աւետարանն և այս մին գրչի է գրած», որից և պիտի եզրակացնել, որ նա ՈՒԿԻ. Թաւանից տուած կամ յետոյ գրել է մի աւետարան Հոռոմոսի վանքի համար, որ գրուել է սուկեառութի մէջ և մեր ձեռքը չէ հասել:

Վենետիկի ձեռագիրը, տարարագրարար, շատ ֆլանտուած վիճակի մէջ է, ոչ միայն առաջին թերթերը՝ 2-9՝ խոնաւութիւնից և սև հեղուկից ֆլանտուած են, այլ և հանուած են նկարներն ու խորանները, լուսանցքի զարդերից շատերը պատուած, առաջին տետրից էլ պակաս են չորս թերթ: Բայց և այնպէս մնացած են երկու կիսախորան և բազմաթիւ լուսանցքի զարդեր, որոնց մասին զոգասանքով է գրում Հ. Սար-

գսեանը. «Չորագիրք խիստ շատ են և բազմապատենան, սակեղարգ: Յոյժ գեղեցիկ են Մարկոսի Աւետ. մեծ սկրնասառը՝ Ս. որուն մէջ նազելի խաչ մը նկարեալ է գեղեցկագարգ և վերը սակեղոյն մահիկը, եղջիւրները դէպի վեր դարձած: Յովհ. Աւետ. գեղեցկագրուած մեծ սկզբնատանն է: Խորանները չկան, այլ միայն երկու կիսախորաններ, այսինքն Մարկոսի և Յովհաննու. քաղմապուենան և սակեղարգ, երկուքն ևս բազմապատուած են և յոյժ գեղեցիկ»: Իսկ նկարագրութիւնը Հ. Սարգսեանը վերջոյցնում է. «մէկ խօսքով Աւետարանիս մանրանկարքն առհասարակ նաև իրենց մօթ դոյներու նրբերանգ խառնուարովը հիանալի լուսատուերներ կարտացոլացնեն, չորս ակներև ևր տանուի ձագիկոյին թէ ճարտար արուեստը և թէ նուրբ ճաշակը միանգամայն»:



Բզնաախոսի դործն է նաև Էջմիածնի N 230/1519 (Կար. 223) Բագնայրի կոչուած աւետարանը, այժմ հասարակ կաշէպատ կազմով⁽¹⁾ ընտիր մագաղաթ, մեծագիր՝ 41, 8x29, 2սմ., խոշոր երկաթագիր և նկարագարգ, իշխանաց իշխան պատրոն Խառնասի և իւր Խաթուն կեոջ ըստացմամբ. «Չպատրոն Խառնաս որդի Ամիր-Սարգսի և դամուսին իւր զԽաթունն յիշնոջիք յաղաւթս, որ ստացան դաւետարանս Բագնայրի Աստուածածնիս վասն յիշատակի իւրեանց սիրելի և անդրանիկ Սասնային, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս և սուգ մեծ եթող ծնաւոյց իւրոց, որ կարգայք յԷջնաջիք ի սուրբ յաղաւթս ձեր, աղաչեմք», 99ր: Պատրոն Խառնասը Չաքարէ և Իւանէ սպասաւարներին մօրեղբօր որդին էր. «Իշխանն պատրոն Խառնաս որդի Ամիր-Սարգսին, որ էր

(1) Սկզբնական կազմի մասին ոչինք յետագայում անդեկութիւն «Գրիգոր Իսուցչուի որդի Պարանի յիշատակարանի մէջ 22է = 1308 թուականից. ատեսի զոտրք աւետարանս որ էր գրեալ և պարզաբալ սակեով և արձարով մեծ պատրոնն Խառնագ և ընծաեալ էր յիշատակ ի սուրբ Աստուածածնին Բզնէրի. անցեալ էր քաղում ժամանակ և արձարն և սակին խախտեալ էր և անցեալ, ուստի և ինքը նորոգել է ապրիս:

(1) Այրարատ. 356:
 (2) Յուցակ Վենետիկ. Միքիթ. եր. 192-193:

եղբայր մաւր կհետառոսոց Հայոց և Վրաց և ամենայն Ափխազաց. բարեպաշտիցն և Ավ. գաւարացեղոցն մեծին Չաքարիայի և Իւանէի»։ 297ա. : Նորան էր յանձնուած Շահնշահ մեծի և ապա սորա որդի Չաքարիայի կրթութիւնը, լինելով Չաքարիայի տան «մախտուր թախուցէս, որ ըստ մերու մտ թարգմանի գլուխ իշխեցող և հրամանատար ամենայն իշխեցողաց և գլխաւորաց տան թագաւորութեան տեառն իւրոյ» :

Աւետարանը նուիրուած էր ոչ միայն Խաւաասի որդի Սասնայի, այլ և սորա մօր՝ Խութլու խաթունի յիշատակին, որ «(յազ) գէ գո(լով) պարսիկ», քրիստոնքութիւն էր ընդունած և որդու մահուանից երկու տարի յետոյ ինքն էլ վախճանուել էր և թաղուել թիտապանի անդրանկին իւրոյ», որ Բագնայրի վանքն էր⁽¹⁾։ Ապա Խաւաասը իւր երկրորդ կնոջ Զմրուխտ խաթունի հետ, «որ և սա ազգաւ տաճիկ գոլով յաղնուական և փառաւորագոյն յազգէ ի մեծ նախարարացն Պարսից», նոյնպէս քրիստոնէութիւն ընդունած, գրել է տալիս ազգուրբ աւետարանս ի յիշատակ անդրանկի իմոյ Սասնային և մաւր նորին Խութլու խաթունին և ինձ բազմամեղիս և ամուսնոյ իմոյ Զմրուխտ խաթունին և սիրելի դստրեկի իմոյ Թայլի թագուհւոյ, ամուսնոյ

(1) Նոյն վանքի արձանագրութիւնների մէջ խօսք կայ եւ ուրիշ ձեռագիրների նուիրարբերութեան մասին. 1262 թուին Գարեգոյն երէջ որդի Մանգիկ երիցու և ամուսինը Մարիամ կալուածական պարգեւների հետ տալիս են եւ «մի տաւնական մագաղաթ, մի աւեսարան տոկեաուփ» (Ալիշան, Շիրակ 119)։ Բայց աւելի կարեւոր է հետեւեալ տեղեկութիւնը, որ Յոհան արեղան գրում է 257 (= 1305) թուին գրած յիշատակարանի մէջ. «Աստանար յանգելիս կատարեցաւ տառս աստուածաշունչ բարձրաբարոզ սուրբ մարգարէիս ետայեա, ի ստոյգ և ընտիր աւրինակէ որ կոչի Բագնայրեցի, զոր սուրբ վարդապետին Յովսէփայ գտեալ թարգմանչացն գրած ի մարրաբաղարն Հաղատա» (Ձեռ. էջմ. 980 նց)։ Ո՞վ է այս Յովսէփ վարդապետը, հաստատ ստել չենք կարող, բայց կարծում ենք վանականի աշակերտներից մէկը՝ Վարդանի, Կիրակոսի եւ Առաքելի աշակերտակիցը ըստ Մաղաքիայի (Ս. Պետրբուրգ, 1870. եր. 12) կամ ըստ Սրբէլեանի ժամանակագրութեան (Ձեռ. երեւանի թանգ.) Աղջոց վանքում 1279 թ. վախճանած Նոյնանուն վարդապետը. «2ԻԸ կատարի մեծ վարդապետն Յովսէփ ի վանսն Ախոց»։ Տես եւ Գանձակեցի Դուկ. հրատ. եր 296, 313, 315։

անդրանկի իմոյ որ է գորմ և շառաւեղ թագաւորացն Հայոց և վասն յերկար կենդանութեան սիրելի որդւոյ իմոյ Վասակայ», և նուիրում է Բագնայրի վանքին, «ի տէրութեան տեղւոյն տեառն Գրիգորոյ, որ մագիստրոսն ասի, վերադիրտողի աթոռոյս Անուոյ և յառաջնորդութեան հաւր Սիմեոնի»⁽¹⁾։

Բագնայրի արձանագրութիւններից մէկը գրուած է հէնց Սասնայի մօր Խութլու խաթունի կողմից ՈՂԸ կամ ՈՂԻ թուականին, հաւանօրէն առաջինը, որից յետոյ ՈՁԱ թուին գրուել է այս շքեղ և փառաւոր աւետարանը որդու և մօր յիշատակին (զժուար թէ ՈՂԻ թուականից՝ այդքան երկար՝ սպասէր Խաւաաս իւր հանգուցեալների յիշատակը անմահացնելու համար)։ Արձանագրութիւնը փոքր ինչ փչացած է, բայց երեւում է, որ նա կալուածներ է նուիրել Բագնայրի սուրբ ուխտին՝ այսօրագս յիշատակաց մերոց և անդրանկին մերո Սասնային, որ կիսաւրեա փոխեց(աւ) և սուզ մեծ եթող ծնողաց իւրոց»։ հայր Սիմէոն իւր միարանների հետ յատկացնում է քառասուն օր պատարագել, քսան Խաթունին, տաս Խաւաասին և տաս Սասնային⁽²⁾։

Արձանագրութիւնների մէջ ունինք տեղեկութիւն և հանդուցեալ Սասնայի կնոջ Թայլիկի մասին. նա Ապիրատի որդու Շարափշահի ազջիկն էր. ծնողներն առանձին առանձին և ինքը նուիրարբերութիւններ ունին Բագնայրի վանքին հայր Սիմէոնի, իսկ Թայլիկն ինքը հայր Սիմէոնի և ապա նորա յաջորդ Արրահամի օրով⁽³⁾. մի տեղ նա անուանում է իրեն «Թաիկ թագուհի դուստր Շարափշահի», միւսում առանց «թագուհի» կոչման։ Աւելի ուշ ԶմԸ (= 1269) թուին «Թաիկ թագուհի դուստր Շարապշահին» տալիս է Հոռոմոսի

(1) Այս յիշատակարանի մի մասը բուն ձեռագրից պոկուած էր և պահպանակ դարձած N 153 / 177 Աստուածաշնչի, իսկ մի մասն էլ, ուր թուականն է, N 1259 / 1134 ձեռագրի. առաջինը գտել և կցել է ձեռագրին հանգուցեալ Սահակ վարդապետ Ամասունին, իսկ երկրորդը մենք։
 (2) Հ. Ներսէս Սարգսեան, Տեղագր. ի Փոքր և ի Մեծ Հայս. Վեներակ. 1864, 179, Ալիշան. Շիրակ. 116։
 (3) Սարգսեան, Տեղագր. 185. 186. 187, Ալիշան. Շիրակ. 118. 119։

վանքին «գԱբէլի ահն որ ի Դիլա դաանն (Անիում) գոր իմ որդին Հազրպէկն ի Գարեգոյնէն գրաւկնեց : է : ձ : սպիտակ : Ը : ձ : սպ : ի վերա խարճ արար որ եղաւ Ռ : Ե : սպ : և ստանում է երկու պատարագ, մէկն իրեն, միւսը Հազրպէկին⁽¹⁾ : Ինչո՞ւ էր նա իրեն կամ Սաւառը նորան «թագուհի» անուանում, պարզ չէ. հաւանօրէն հայրը կամ պապը ամուսնացած էր Կիրիկեանների թագաւորոջ տան աղջիկներից մէկի հետ. հօր կողմից նա Պահլաւունի էր⁽²⁾ :

ԳԱՐԵԳԻՆ ՍՐՔԵՊՍ. ՅՈՒՍԷՓԵԱՆ

(Շար.)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ԿԻԼԻԿԻՈՅ ՀԱՅ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ
ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
ԺԿ. ԴԱՐՈՒՆ ՕՏԱՐ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԻ Ի ՄԸ
ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այս ճանապարհորդն է գերմանացի Պրոքարտ բնիկ Սթրազպուրիցի, որ Կ'ապրէր ժԳ. զարուն : Տոմինիկեան կարգէն կրօնաւոր մ'էր ան և 1232 ին ճամբորդած է Արևելք : Այցելած է Եգիպտոս, Սիրիա և Կիրիկիա՝ ուր հաստատուած էր հայկական արքունիքը : Կ'ըսուի թէ ան տասը տարի ապրած է Երուսաղէմի Սիոնի վանքը և իր կեանքին վերջին տարիներուն անցած է Եւրոպա : Անոր մահուան թուականը յայտնի չէ : Aubrey Stewart անգղիերէնի թարգմանած է անոր Ուղեգրութիւնը որ հաւանաբար խմբագրուած է 1260, 1263, 1268 և 1271 թուականներէ վերջ, և 1291 և 1285 թուականներէն առաջ : Թարգմանիչը ի զովեստ Պրոքարտի կը գրէ հետեւեալ խօսքերը իր յառաջտարանին մէջ. «Ան անկեղծ հաւատացեալ մ'էր, օտար եկեղեցիներու հանգէպ իր սէրը շատ գնահա-

տելի էր : Իմաստուն և հանճարեղ էր ան, իր ճամբորդութեանց ժամանակ շարունակ տեղեկութիւններ կը քաղէր և կ'իրարացնէր զանոնք : Կ'ապրէր օտար կրօնականներուն մէջ, ընդունելով զանոնք իրր եղբայր : Նկարագրով խոնարհ էր և արի, հետաքրքիր ու բարեպաշտ, իր ուշադիր հետաքրքրութեամբ Պրոքարտ գրի առած է աշխարհագրութեան և բնական պատմութեան գիտելիքներ՝ որոնցմէ շատերը օգտուած են : Պրոքարտէն օգտուած են նաև ուրիշ ուխտաւոր ուղեգիրներ, ինչպէս Ֆելիքս Ֆապրի և Մարինօ Սանթիթօ և այլք : Իր Ուղեգրութիւնը գրի առած է միջին զարու ընտիր լատիներէնով մը :

Կիրիկիոյ հայ արքունիքին ու հայ եկեղեցականութեան մասին գրածները անաշառ են և ճշգրիտ, կը հիանայ հայոց թագաւորին և թագուհիին և անոնց իշխաններուն, ինչպէս նաև հայ եկեղեցականաց ու ժողովրդեան բարեպաշտութեան վրայ. տեղեկութիւններ կուտայ կաթուղիկոսին և միւս եկեղեցականաց ստորադին վրայ. մէջ կը բերէ հայ արքունեաց ներքին կեանքին սովորութիւնները, թագաւորին և եկեղեցականաց կողմէ արուած կրօնական պատիժները, կը յայտնէ հայ ձէսի նկատմամբ իր հրացումը ևն. Պրոքարտի Ուղեգրութեան հայկական այս մասը թարգմանութեամբ ստորեւ կուտանք, իրր շահեկան գրուածք մը, մեր կողմէն ինչ ինչ մասերը ծանօթագրելով : Հ. Ալիշան քանի մը ատղ միայն Պրոքարտէն առած է իր Սիստուանին մէջ (տե՛ս էջ 225), սակայն հայ եկեղեցւոյ մասին անոր գրածները բոլորովին զանց ընելով :

«Հայոց առաջնորդներուն գլուխը կը կոչուի կաթուղիկոս : Անոր քով մնացի տասնեւչորս օր, ան իր մօտ ունի արքեպիսկոպոսներ և եպիսկոպոսներ, վանահայրեր և ուրիշ եկեղեցականներ : Ան իր սնունդովը, զգեստներովը և կենցաղովը այնքան օրինակելի է որ՝ անոր նման ոչ մին տեսած եմ, ըլլայ կրօնական, ըլլայ աշխարհական, և ստոյգ կերպով կը յայտարարեմ թէ՛ իմ կարծիքովս իր հազած գգեստները հինգ ստերլին լիլին արժէք չունին. սակայն ան ունի շատ հաստատուն զգեակներ և մեծ եկամուտներ, և

(1) Ալիշան. Շիրակ. 28.
(2) Ապիրատ Պահլաւունու որդիքն էին Տէր Սարգիս և Թախիկ հայրը Շարափշահ. (Սարգսեան. Տեղագր. 179. 181. 185. 186; Ալիշան. Շիրակ. 117. 120.)